«Անցում ցածրածխային ոռոգման տեխնոլոգիաներին՝ Հայաստանի Լոռու և Շիրակի մարզերում բարձրացված արդյունավետության, պարենային անվտանգության և բարելավված կենսապահովման համար» ծրագրի եզրափակիչ արարողությունը

2024 թվականի հուլիսի 15-ին «Այրում-Ճոճկան» և «Ճոճկան 1» ջրի պոմպակայաններում տեղի ունեցավ «Անցում ցածրածխային ոռոգման տեխնոլոգիաներին՝ Հայաստանի Լոռու և Շիրակի մարզերում բարձրացված արդյունավետության, պարենային անվտանգության և բարելավված կենսապահովման համար» ծրագրի եզրափակիչ արարողությունը:

Ծրագիրը ֆինանսավորվել է Ճապոնիայի կառավարության կողմից և իրականացվել է ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և այլ գործընկերների հետ համագործակցությամբ:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտական, Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տիկին Նաթիա Նացվլիշվիլին, Լոռու մարզպետի տեղակալ պարոն Գոռ Ասրյանը, ինչպես նաև համագործակցող նախարարությունների և ծրագրի հետ առնչվող այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Արարողության ընթացքում մասնակիցներն այցելեցին «Այրում-Ճոճկան» և «Ճոճկան 1» ջրային պոմպակայաններ, որտեղ ցուցադրվեցին տեղադրված արևային կայանները (450 կՎտ) և արդիականացված էներգաարդյունավետ պոմպերը, ինչպես նաև ներկայացվեցին բարձրացված ֆունկցիոնալությամբ և տեխնիկական հնարավորություններով արդիականացված երկու պոմպակայանները:

Ճապոնիայի դեսպան պարոն Առկին վստահություն հայտնեց, որ ծրագիրը արդեն իսկ նպաստում է Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի ազգային մակարդակով սահմանված գործողությունների իրագործմանը և հույս հայտնեց, որ բազմակողմ համագործակցությունը շարունակական կլինի:

Արդիականացված պոմպ

Տեղադրված արևային կայան

Պոմպակայանի ցուցադրում

Արևային կայանի ցուցադրում

Ծրագրի արդյունքների ամփոփում

Դեսպան Անկին միացնում է պոմպը

Ծրագրի վահանակ

Խմբային նկար